



ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԴԱՎԱՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՄԵՐԱԾԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԺԳ ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տարիներ առաջ հայագիտության անխոնջ վաստակավոր Հակոբ Անասյանը Մատենադարանի ձեռագրերից մեկում (№ 8356, ընդօրինակված 1322 թ. Կիլիկիայի Կամրիկ անապատում՝ հեղինակային ինքնագրից) ի հայտ բերեց և 1968—69 թվականներին հրատարակեց ու վերահրատարակեց («Բազմավեպ» 1968, № 7—12, «Էջմիածին» 1969, № 7—8) Վարդան Այգեկցու գրչին պատկանող և մատենագրության պատմության համար առանձնակի կարևորություն ներկայացնող մի թուղթ՝ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն»։ «Շատահաջ քննողք» նորահմար բնորոշումը վերաբերում է Ասորիքի Դուրբ գավառի հայ, ասորի և հույն այն հավատացյալներին, որոնք, ի կատարումն սատանայի կամքի, բռնված են ազգային-դավանական անհանդուրժողականության մոլուցքով. «քանզի Հայն ասէ, թէ ես եմ լաւ և ընտիր քրիստոնեայ և հայհոյէ անմտութեամբ զՀոռոմն և զԱսորին։ Եւ Հոռոմն ասէ հպարտութեամբ, թէ ես եմ ազգ առաջին, սուրբ և գիտնական և ուղիղ հաւատ, և Հայն ու Ասորին ոչ են ի կարգս քրիստոնեութեան և ոչ ունին առ աստուած բաժին, և այսպէս նախատէ և հայհոյէ։ Իսկ Ասորին ասէ ծածուկ նենգութեամբ և կեղծաւորութեամբ, թէ ես եմ ընտիր քրիստոնեայ և ունիմ անարատ հաւատ և սուրբ կարգ, և Հոռոմն և Հայն լցեալ են չար

հերձուածաւք, աստար են յաստուծոյ և զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեն և դժոխսց են ծառանգ»։ Եվ մինչ ամեն մեկն զբաղված է իր հավատն ու կարգը գովելով՝ «գայ խալիֆաւն ի Բաբելոնէ և խաւիմ Հալապայ, և նախատեն զձեզ... և ասեն, թէ դուք ամենայն քրիստոնեայքդ աստար էք յաստուծոյ և ոչ ճանաչէք զնա...»։ Այգեկցին հանդիմանելով խրատում է և պարսավելով հորդորում, թէ դուք բոլորդ՝ հայ, ասորի, հույն «ի մի Քրիստոս կոչեցեալք և ի մի աւագան մկրտեցալք, ի մի հայր և ի մի սուրբ հոգի յուսաւորեցալք և դարձեալ նախատէք զիրար և հայհոյէք...», «Ընդէր ոչ հայիք ի տունն մայիմնաց, թէ քանի ազգ են բաժանեալ լեզուաւք, և կան խաղաղութեամբ և սիրով առ իրար, ի մի սահման և ի կարգ, գոր առաջնորդն իրեանց Մահմետ կարգաւորեաց և սահմանեաց զնոսա»։

Իրատես Այգեկցու դատողության հիմքում ժամանակի սթափ գգացողությունն է դրված և ոչ՝ պառակտողականությունը. «Ո՛վ յիմարք և անմիտք, չգիտէ՞ք որ այս չէ ծամ զհաւատքս քննել կամ հաստատել... այժմ որ ունի՞ այն է զինչ որ ունի», ուրեմն ավելորդ է վիճարկել, թէ ո՛վ ավելի առաջ «ծանեաց զՔրիստոս», ով է անարատ հավատով և կարգով. «Ապա աղաչեմ զձեզ, որդեակք, ամէն ազգ կալէք զիր եկեղեցւոյն սահման և սովորութիւնն և զկարգն՝ զպատարագելն, զտանելն, զպահքն, ըզ-

մկրտելն և առ իրար սիրով կեցիք և խաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ... և վասն կարգաց եկեղեցույ մի քննէք և բանալէ՛ն լինիք և անհանգստիք»։ Խոռվարարները՝ հայ, հույն թե ասորի, Այգեկցու համոզմամբ, աստուանայի բերանով են խոսում։ «և վասն աստուծոյ աղաչեմ զձեզ ի բաց թողէք ի ձեռն զտրտունջ և զքամբասանք», մանավանդ որ «աստուանայ բնառն էր թող եկեղեցի և ազգ և մարդ անարատ և անվնաս, այլ դեղեալ ապականեաց զամենայն ազգ և զեկեղեցի» «և թե կայ իրք մի չար յեկեղեցիս քրիստոնէից՝ զայն չհամարի անցա ի մեղս, զի մարդիկ են տկարամիտք, և աստուանայ խաբարդ է և անգաւոր...»։

Այս ամենը, հիրավի, ազգամիջյան համերաշխության գաղափարի դրսևորման միջնադարյան մատնացուցելի նմուշ է և կիլիկյան Հայաստանում նախորդ սերնդի մեծերի՝ Ծնորհալու, Լամբրոնացու, Գրիգոր Տղայի մտորումների ու համոզմունքների ակնհայտ զարգացում։ Խոսքը ավետարանական համերաշխության ու մարդկայնության մասին չէ, այլ բազմազգի և այլադէն պատմական միջավայրում գաղափարական դիրքորոշման։ Մենք դժվարանում ենք Այգեկցուն ժամանակակից քրիստոնյա Արեւելքի այլ մատենագրություններում այսքան լայնախոհ, հանդուրժողական և այսքան ուղղակի ասված համերաշխության հորդոր ու կոչ գտնել։

Այս թղթի, ինչպես նաև «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» ժողովածուի հայտնաբերումով Հ. Անասյանը Վարդան Այգեկցու ժառանգության ուսումնասիրության մարզում Ն. Մառից հետո մի նոր շրջափուլ բաց արեց և մեկ անգամ ևս ապացուցեց, որ հայոց մատենագրության ուսումնասիրությունը «զեղեցիկ գրականությանը» ամփոփելը փակուղի է տանում։

Բայց, որքան էլ զարմանալի է, Հ. Անասյանն իր առաջ խնդիր չդրեց պարզելու, թե 1210 թվականից հետո (բայց մինչև 1215 թ.) Այգեկցու գրված այս թուղթը իր արժարժան հարցերով և աշխարհայեցությամբ միա՛կն է մեր գրականության պատմության մեջ, թե՛ այն ունի իր նախորդը կամ շարունակողը։ Ասել է թե՛ անհրաժեշտ էր պարզել՝ սա մի մասնավոր դեպք է՝ պայմանավորված Ասորիքի տարագրի համայքների միջև ստեղծված դավանական կացությամբ, թե՛ աշխարհայացքային նոր դիրքորոշում էր հայ մտավորական աշխարհում առհասարակ։ Առիթը ներկայացել էր հաստատելու կամ մերժելու դարասկզբին Ն. Ադոնցի առաջադրած այն

դրույթը, ըստ որի ԺԲ—ԺԳ դարերի հայոց եկեղեցական գրականությունը իր հարստությամբ մասամբ պարտական է «այն կուսակցական քաջքշուկներին ու ընդհարումներին, որոնք տեղի էին ունենում հայոց կրթականության երկու կենտրոնների միջև», այսինքն՝ կիլիկյան և Հյուսիսհայաստանյան։ Ըստ Ն. Ադոնցի գնահատության «Միարարության միտքը համակրություն էր գտնում եկեղեցու այն ներկայացուցիչների թուլ, որոնք դաստիարակվել էին կիլիկյան նոր ոլորտում՝ առեցնում արևմտյան ոգով», մինչդեռ հյուսիսային կողմանց հայոց վարդապետները «վարդապետության հարցում բռնել էին ծայրահեղական դիրք, կիլիկեցիների լիբերալիզմին հակադրելով Սանահին դպրոցի նվիրվածությունը անցյալի պատգամներին» (Բրուկհաուզի-Եֆրոնի Նոր հանրագիտական բառարան, հ. 3, ՄՊբ., էջ 652—653)։ Այս բնութագրության ազդեցությամբ հայ մատենագրության կիլիկյան լիբերալ թեկն հակադրվեց «Վարդապետք հայոց հիսուսային կողմանց» կոնսերվատիվ թեկը, որ ներկայացնում են Տուտերդին, Քոբայրեցին, Գոշը և այլք (Լ. Մելիքսեթ-Բեկ, Ի. Աբուլաձե և ուրիշներ)։ Վարդան Այգեկցու նորահայտ թուղթը լիովին արդարացնում է «լիբերալիզմ» որակումը՝ նշանակալիորեն ընդլայնելով այդ տերմինի դրական ընդգրկումը, բայց, ինչպես կոնսենսեք ստորև, ամենևին չի ընդգծում մյուս թեկ «կոնսերվատիզմ»։

Մխիթար Գոշի գրական վաստակները թվարկելիս Կիրակոս Գանձակեցին հիշում է «Գիրք մի՛ Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ» (Գանձակ., էջ 221)։ Հայագիտության մեջ կարծիք է հայտնվել, թե այս երկը չի պահպանվել (Լ. Մելիքսեթ-Բեկ), մինչդեռ այն ուրիշ բան չէ, քան 1800—1801 թվականների «Արարատում» երեք ձեռագրի հիմամբ տպագրված (ախտի խոստովանել՝ ընթերցումների բավական անհաջող ընտրությամբ) «Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիր» ընդարձակ ջատագովականը, հասցեագրված հիշյալ զորավար եղբայրներին և նրանց միջոցով՝ վրաց արքունիքին ու կաթողիկոսին։ Գրության ժամանակը ստուգապես հայտնի չէ, բայց աներկբայորեն հաջորդել է Լոռեի 1204/5 թվականին կայացած ժողովին, որին Գոշը ներկա է եղել, և նախորդել 1207 թ. Ծննդյան տոնի նախօրեին հրավիրված Անիի ժողովին, որին Գոշը նույնպես մասնակցել է։ Թղթում «հաղթող թագաւորք մեր» Թամարն ու Դա-

վիթ Ստալանը կենդանի են հիշվում, որով պատահ կարող ենք ասել, թե այն գրված է 1206 թվականին: Գրության շարժառիթը որոշակի է. «Յաւորս մեր տեսանելով և լսելով զբարբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ և կարգաց եկեղեցոյ՝ յոյժ խոցեալ լինէի հոգի, մանաւանդ զի,—դիմում է գորավար եղբայրներին,—հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ»: Վրաց կաթողիկոսին ու հոգևորականությանը ուղղած նախադրությունում ասված է. «Գրեցաք զթողթոյ ոչ հակառակելով և կամ զոք պարսաւելով յազգաց, այլ զարժան և զիրաւունս իբր դատաստանաւ ցուցաք և զոծուարաւ զայն ի միաբանութիւն և զհնարաւորն ըստ ժամանակիս յայտ արարաք, և զճշմարիտ խոստովանութիւն ցուցաք զմերոյս ազգաց և զխոտելի իրն ոչ թաքուցաք զմեր ազգիս, և զիրաքանչիւր ազգի զգովելին և զպարսաւելին գրեցաք, և ի գլոյս բանին ընտրեցաք զբարին և զլաւըն»: Նշանակում է՝ թղթի հետապնդած նպատակներն են.

Ա. Ներկայացնել հայոց դավանությունն ու եկեղեցու ծիսակարգը, բացատրել նրանում եղած ինքնօրինակությունները:

Բ. Ինչպես հույներն ու վրացիները, այնպես էլ հայերը հերձվածողներ չեն, ուստի միմյանց հանդեպ կրկին մկրտություն կիրառելը «Քրիստոսի է անարգանք»:

Գ. Լավ կլինէր, եթե «ամենայն ազգ միակրան լինէր», բայց այլևս միաբանության հասնելն անհնար է:

Դ. Ներկա կացության մեջ ի՞նչ պետք է անել. «Միանգամայն և այն ցուցաք, թե զինչ այժմ հնարատր է լինել ազգաց, զորս թե ձեզ (իմա՝ գորավար եղբայրներին—Պ. Մ.) հաճոյ կարծի՝ թարգմանեալ ընթեռնոյքն առա (իմա՝ վրացիներին—Պ. Մ.)»:

Ի տեսնք, որ Գոշի այս երկի ուսումնասիրությունը առ այսօր ընթացել է գերազանցապես աղբյուրները բացահայտելու ուղիով. Լ. Մելիքսեթ-Բեկը պարզել է, որ Դվինի ժողովի մասին պատմելիս Գոշը օգտվում է Հովհան Օձնեցու «Սակա ժողովոց, որ եղեն ի Հայս» երկից՝ համառոտելով, հայ-վրացական եկեղեցական բաժանումը ներկայացնելիս՝ Անանիա Սանահնեցու «Վասն բաժանման Վրաց» գործից՝ գրեթե բառացի քաղումներով: 1938 թվականին գրված մի հոդվածում Ի. Աբուլաձեն հաստատապես ապացուցեց, որ Գոշի թողթոյ պատասխանն է Արսեն Վաչե-ձեի «Դոգմատիկոնի» հակամիաբնակ դրվագներին, որպիսիք ութն են, մասնավորապես նրանցից՝ մեկին՝ «თავნო ღმრთისა წვდოვდბობნო ოცდობნო» — «Երեսուն գլոյս հայոց

հերձումի»։ Հայագետը ցույց տվեց նաև, թե հակամիաբնակ այս երկը հայ քաղկեդոնականների միջավայրում թարգմանվել է հայերենի, լրացվել թարգմանչի մեկնաբանություններով ու ընդմիջարկություններով և «Պատասխան» առ Հայս» խորագրով ժամանակին հրատարակվել Պոլսի «Լոյս» շաբաթաթերթի 1905—1906 թվականների համարներում։ Մի քանի տարի առաջ Զ. Ալեքսիձեն հրատարակեց «Երեսուն գլոյս Հայոց հերձումի» վրացերեն բնագիրն ու նրա համապատասխան հատվածները Հովհան Դամասկացուն վերագրված «Պատասխանի առ Հայս» երկից։ Ի վերջո՝ 1976 թ. Ժ. Գաբիրյանը ճշգրտեց, թե Արսեն Վաչե-ձեի «Դոգմատիկոնի» հիշյալ հակամիաբնակ դրվագի աղբյուրը հունարեն մի աշխատությունն է, հրատարակված Մինի Patriologiae Graeca-ի 132-րդ հատորում (սյունակ 1221—1237)։

Այս ամենը, անշուշտ, և՛ կարևոր է, և՛ հետաքրքիր, բայց մոռացության է տրվել ամենաէականը՝ ինչո՞ւ է տարբերվում Մի. Գոշի թողթոյ այն մատենագրական երկերից, որոնցից օգտվում է կամ՝ որոնց ի պատասխան գրված է։ Մեր խնդիրը այս հարցերին պատասխանելն է։

1. Մի. Գոշին նախորդած հայ հեղինակները, իբրև կանոն, ջանացել են ապացուցել, որ հայոց եկեղեցու դավանությունն ու ծիսակարգը անխոտոր պահպանել են ուղղափառությունը և որ հերձվածողները՝ Քաղկեդոնի ժողովի հետևորդներն են։ Գոշը նույնպես պաշտպանում է միաբնակ եկեղեցու ուղղափառությունը, բայց և երկաբնակությունը հերձված չի համարում. «Ե ազգաց (իմա հույներ, հռոմեացիներ, հայեր, ասորիներ և վրացիներ—Պ. Մ.) չտեսանեմք այնքան պատճառք, որ անընդունելի առնէ աստուած զհաւատ կամ զտաւն և նա ճանաչէ զիրաքանչիւրոցն զարժանաւորութիւն», ուստի «Այլ թե ասացեալ հինգ ազգոյ ոչ կարեն միաբանել, բայց կարող են թշնամիք միմեանց չլինել, զիսչ և զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ», որովհետև «Հայք և Վիրք, Ասորիք և Հռոմք ճշմարիտ գերորդութիւնն խոստովանին և զՔրիստոս աստուած՝ ճշմարիտ որդի աստուծոյ, թէպէտ և ի տնայրեւութիւնն ալլալլեն, և զՄարիամ Աստուածածին, թէ չիցէ ի կարծեաց Նեստորի, և զիսչ՝ աստուծոյ խաչ. առ Հայս աշխուռն ճշմարիտ է։ Այլ ինչ սակաւ բաժանումն տաւնի կամ պահոց, կամ կերակրոց՝ չէ հաւատոյ բաժանումն»։ Գոշը լայնախոհաբար նկատում է. «Մի՞թէ ընդ ամենայն աշխարհ Հայ միայն է և կամ Վրացի, և

կամ Հոռոմ. Քրիստոս չէ նախանձոտ. նա ամենայն ազգ ընկալեալ է, զի զարքայութիւնն զուովանի նմանեցոյց, յոր ամենայն ազգ ձկանց ըմբոյն: Աստուած ե՞րբ առնէ թողութիւն այն քրիստոնէին, որ զտաճիկն և զԶօնդն լաւ ասէ քան զՀայն. այնպիսի ասացողքն չունին թողութիւն ոչ աստ և ոչ ի հանդերձելումն՝ թէ չապաշխարին. թէ Հայ Վրացոյ ասէ կամ Վրացի Հայոյ և կամ այլ քրիստոնէայ ազգ քրիստոնէի, զի ամենայն քրիստոնէայք եղբարք են»:

Պատկերացնելու համար, թէ ինչ սար ու ձոր կա Մխ. Գոշի և նրա դիմաց կանգնած հուն և ու վրացի հեղինակների համոզմունքների միջև, բաւական է հիշել նրանց գործածած մի քանի արտահայտություն՝ «ամենայն չար Հայք», «անաստվածներ և զազրեղիներ», «այծմյան Հայք՝ մերժողք, հայհոյիչ և փոխյալ են այսպիսի խորհրդոց», հայոց եկեղեցիները կոչվում են «սատանայական ժողովարաններ» և այլն: Ի դեպ՝ նման տեղիները հիրավի վիրավորական են ներկայացել հուշարձանի միջնադարյան երկաթեակ հայ թարգմանչին, ուստի նա այս որակումները բաց է թողել:

2. Դավանության շուրջ խոսող Գոշի նախորդները հայ իրականության մեջ և մանավանդ հունա-վրացական միջավայրում սովորաբար հավասարության նշան են դրնում ազգային և դավանական հասկացությունների միջև: Պատահական չէ, որ հունական և վրացական աղբյուրներում երբեմն «հայք» «հայոց»-ի փոխարեն գործածվում է «խաչեցարներ» փոխաբերական տերմինը: Գոշը որոշակիորեն տարբերում է այս կամ այն ժողովուրդը և նրա դավանությունը: Նա ջանում է ապացուցել, որ միաբնակություն դավանող ուրիշ ժողովուրդներ էլ կան և թվարկում է Ասիայում ու Աֆրիկայում գտնվող շատ երկրներ ու ժողովուրդներ (էջ 503), որոնք «ընդ մեզ ի նոյն կրոնի կան հաստատուն, չընկալեալք զժողովն Քաղկեդոնի», «և սոքա ի նոյն հաստատեալ հաւատս՝ ոչ միաբանին ընդ Յոյնս և ընդ Վիրս»: Կա և հակառակը՝ ապրում են հայոց միջավայրում, հայալեզու են, բայց հայ չեն ազգային պատկանելությամբ, որպիսիք են ըստ Գոշի «մաքենաբիք» (էջ 60): Այս էթնոնիմի տակ, թերևս, Գոշը նկատի ունի պալլիկյաններին: Վրաց հոգևորականությանը դիմելով՝ Գոշն ամփոփում է. «Մի՛, սիրելիք աստուծոյ, լսող լինիք թշնամեաց մերոց, զի չկայ ի Հայք հերձուած, և զայն սակաւ պատճառն, զոր ունին՝ լամենայն ազգ այլ շատ կան և տեսանեմք, և զայն չէ հերձուած Հայոց»: Անհրաժեշտաբար կրկնում ենք՝ իր տված

քննությանը Գոշը կառուցում է էթնիկական-ազգագրական հատկանիշների և ոչ դավանական ինքնությունների վրա: «Չիք ազգ,—ասում է նա,—որ բարի կարգ ոչ ունի և խոտան», «Յոյնք իմաստունք են և ողորմածք, ուսեալք ի Յոհանէ Ոսկեբրանէ, Հոռոմք զգաստք են աղաթից և հնազանդ առաջնորդաց, Ասորիք խոնարհք են և ճգնող, Հայք պահողք են և ողորմածք գերելոց և եկեղեցականաց, սրբութեան սիրողք, Վիրք սրբոց և վանորէից մեծարողք և անբամբաս առաջնորդաց», և ապա՝ «Առաջնորդաց անհնազանդ են Հայք, բայց սրբութիւն կրանաւորաց ի Հայք առաւել գտանի և արժանաւոր պատարագ, քան զայլ ազգ»: Նույնիսկ ոչ կանոնական դիտող, բայց ազգային սովորույթ դարձած իրողությունները նա հանդուրժելի է համարում. «Այլ զի յոյժ պատուեն Վիրք զկնքահայրսն՝ գովելի է, թէպէտ և ոչ է կանոնական, և զի՝ բամբասեն զհայսն, թէ զազգականս առնեն կնքահայր»: Նա դիտում է, որ տարբերություններ հիրավի կան. «Յոյնք և Վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն և Հայք՝ զխաչ», «որպէս Հայք զխաչ անարգեցին՝ արհամարհանալ լամենայն տեղիս կանգնելով, նոյնպէս Յոյնք և Վիրք զպատկերս, զի զոր գիտեմք՝ ընդունինք և պատուեմք, զի յիշեցուցիչ է որպէս պատմութիւն վարուց սրբոցն, բայց զի արք տգետք պաշտելի կարծեն վասն այն և ոչ փութան առնել Հայք, այլ իմաստունք զարարեալսն ոչ անպատուեն»:

3. Այն գրությանը, որին պատասխանում է Մխ. Գոշը, անծանոթ է միջէթնիկական հարաբերությունների հեռանկարի հասկացությունը, ինչպէս նաև ազգամիջյան համերաշխության և դավանական հանդուրժողականության գաղափարը, մինչդեռ իրատես Գոշը իրեն պարտավոր է զգում ասելու, թէ «զի՛նչ այժմ հնարաւոր է լինել ազգաց»: Նրա համոզմամբ վրաց թագավորները ևս «նախանձաւորին խաղաղութեան և սիրոյ առ միմեանս հաւատացելոց», և թէև Թամարն ու Դավիթը «չեն բաւական տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց ...այլ աստուծոյ շնորհաբն կարող են զՀայոց և զՎրաց թշնամութիւնն բառնալ, որ Քրիստոս չհայհոյեն, զի այն Քրիստոսի է ատելութիւն, որ զխաչ և զկրաստ և գեկեղեցի միմեանց չհայհոյեն և նախատեն»: «Եւ դուք բաւական էք,—դիմում է նա գորավար եղբայրներին,—զսաստկացեալ պատերազմդ հայհոյութեան շիջուցանել իմաստութեամբ և հաւանել քանի, թէպէտ և անհրճար ցուցաք զժողովն լինել և զմիաբա-

նություն... զի դուք իշխանք էք Հայոց և Վրաց կամաքն աստուծոյ, և թէ կամիք ծանուցանէք աստուածաւեր թագաւորացոյ, որ արքայական իշխանութեամբ աստուծոյնէն: Գոշը նման դիմում է կատարում և վրաց հոգևորականությանը. «Արդ, մի լիցի ձեզ պատճառ լինել և այլոց գայթակղութեան, այլ առաւել շինութեան և խաղաղութեան»: Մարդիկ միմյանց պետք ու կարոտ ունեն, ուստի նրանց չի կարելի ատելությամբ բաժանել («Այլ զայս նախ դիցուք զկամս աստուծոյ, որ սիրողն է միաբանական կենաց մարդկան, վասն որոյ կարաւորս արար պէտս ունել միմեանց, և յաղագրս այնորիկ շինեցան քաղաքք և այլ բնակությունք: Ընդդէմ այսմ է և կամք չարին բաժանելն մարդկան ատելութեամբ, զի այսու դիւրաւ զչարն գործիցէ, որպէս սիրով զբարին աստուած»): Արմատացած սովորությունների և գոյացած ավանդույթների պատճառով «անհնար տեսանէք զգալն ամենեցուն ի միաբանություն», բայց և միաժամանակ «լաւ համարեցաք, որ զմիմեանս զթշնամանէք և զխաչ և եկեղեցի չանարգենք», որովհետև «և այս ախտ ամբարտաւանութեան է, զի Յոյնն զինքն կարծէ ճշմարիտ և Հոռոմն զինքն, նմանապէս և ազգ ամենայն»: Խելամիտն իրար հանդուրժելն է. «լաւ էր, թէ զայն ընտրէաք, որ զթշնամություն բառնէաք ի միմեանց և բարեկամ լինէաք և զկարգ միմեանց չհայդէաք»: Գոշը այլ ելք չի տեսնում, քան խաղաղ ու ինքնակա գոյակցելը. «Արդ, այլ ինչ հնար բառնալոյ զայդ հակառակությունդ ոչ տեսանէք, բայց թէ զմիմեանց հաւանելն և կալ լիւրաքանչիւր կարգի ամենայն ազգ...»:

Կատարված քննությունը մեզ մղում է մի քանի սկզբունքային եզրակացությունների.

Ա. ԺԲ—ԺԳ դարերի հալ իրականության մեջ Վարդան Այգեկցին միակ հեղինակը չէ, որ հանգել է դավանական հանդուրժողականության և ազգամիջյան համերաշխության գաղափարին. նրանից առաջ և

նրա օրոք այդ նույն գաղափարախոսության բանիբուն ջատագով է եղել Մխիթար Գոշը:

Բ. Հայոց էթնիկական աշխարհի երկու ծայր հատվածներում՝ Կիլիկիայում և Հյուսիսային Հայաստանում, միաժամանակ, բայց միմյանցից անկախ ձևավորված համերաշխության և հանդուրժողականության այս գաղափարը բարձրակետ էր, որին հանգեցրել էր հայոց էթնիկական, քաղաքական ու մշակութային զարգացման ողջ նախընթաց շրջանը:

Գ. Վերանայելի է ԺԲ—ԺԳ դարերի հայոց մատենագրության և նրա կերտողների երկու հակադրվող թևերի բաժանումը, մեկին որակելով լիբերալ, մյուսին՝ կոնսերվատիվ: Կիլիկյան և Հյուսիսային կողմանց վարդապետների թղթերում եղած փոխհանդիմանությունները նման ընդհանրացման հիմք չեն տալիս: Մշակութային ամբողջականության զգացումը միջնադարյան էթնիկ ինքնագիտակցության կարևոր քաղաքիչներից է:

Դ. Հայ ժողովրդի ստեղծած մշակույթի միջնադարը այլ ժողովուրդների մշակույթներին հարաբերելիս անտես չպիտի առնել տեղական ավանդների գործունեւրկայությունը. իր գոյությունն ապահովելու և խաղաղ գոյակցելու երազանքը միշտ ուղեկցել է տեղական մաքառումներով ապրող մեր ժողովրդին: Աշտարակի Կարմրավորի կառուցողը է դարձել փորագրել է՝ «տուաք շինել... վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և շինութեան Աշտարակի և պըտղաբերութեան սահմանիդ»:

Ե. Մխիթար Գոշի մատենագրական ժառանգությունն ուսումնասիրելիս, «Դատաստանագրքում» երևացող և հումանիստական որակվող համոզմունքները գնահատելիս զանց չպիտի առնել «Գծագրություն» կամ «Թուղթ» կոչվող երկի խիստ ուշագրավ դրույթները:

